ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի, ժամը 12:00-ի ընդլայնված նիստի N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում»՝ «Պետական փոխառու միջոցների ներգրավման միջոցով տնտեսական զարգացում ապահովելու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում»** (ծրագրի գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կ.Հ.Գրիգորյան**) **2021 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվության մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

Զեկուցողը նշեց. հետազոտական խմբի անդամներն աշխատել են ըստ ծրագրի նախապես բաշխված պարտականությունների և ներկայացված ժամանակացույցի: Թեմայի իրականացման ընթացքում կատարվել են պարբերական գիտական քննարկումներ: Աշխատանքի առաջին փուլում խնդիր է դրվել վերջին տասնամյակում ՀՀ-ում իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ուսումնասիրմամբ, պետական պարտքի կուտակման գործընթացի, պետական պարտքի և տնտեսական աճի կախվածության վերաբերյալ տեսությունների ու էմպիրիկ հետազոտությունների արդյունքների մեկնաբանմամբ, 2020 թ. մակրոտնտեսական վիճակի վերլուծությամբ առանձնացնել այն տնտեսական շոկերը, որոնց ազդեցությունների չեզոքացման համար կառավարությունը մեծացրել է պետական պարտքը, գնահատել ՀՀ կառավարության պարտքի կայունությունը և դրա վրա ազդող գործոնները, պետական պարտքի՝ մակրոտնտեսական ցուցանիշների վրա ազդեցությունների չափը և ուղղությունները, իրականացնել ՀՀ կառավարության պարտքի սցենարային վերլուծություն՝ գնահատելու պարտքը հարկաբյուջետային կանոններով ընդունելի կայուն մակարդակի վերադարձնելու հնարավորությունները մակրոտնտեսական և հարկաբյուջետային հիմնական փոփոխականների տարբեր զարգացումների սցենարների ներքո և մակրոտնտեսական տարբեր շոկերի ազդեցությունների պարագայում գնահատել պարտքի կայունությունը: Եզրակացվել է, որ պարտքի կառուցվածքում անհրաժեշտ է բարձրացնել դրամային գործիքների կշիռը, ինչը, չնայած դրա արդյունքում տոկոսավճարների ավելացմանը, էականորեն կմեղմի պարտքի զգայունությունը փոխարժեքի շոկերի նկատմամբ: Աշխատանքի երկրորդ փուլում պետական փոխառու միջոցների ներգրավման հնարավորությունների բացահայտման, պետական կապիտալ ծախսերի և տնտեսական աճի միջև կապի գնահատման նկատառումով բացահայտվել են պետական փոխառու միջոցների ներգրավմամբ իրականացվող խթանող հարկաբյուջետային քաղաքականության դրական և բացասական ազդեցությունները, արտաքին և ներքին կապիտալի շուկաներից միջոցների ներգրավման հնարավորությունները ՀՀ-ում, վերլուծվել

են պարտքի կառավարման հիմնական ցուցանիշների շարժընթացը, կառավարության պարտքի պորտֆելի կառուցվածքը: Այս փուլում կարևորվել են նաև պետական կապիտալ ծախսերի և տնտեսական աճի փոխառնչությունների մեկնաբանումը, պետական կապիտալ ծախսերի վերլուծությունը, վերջին տարիներին կապիտալ ծախսերի նվազման պատճառների և տնտեսական հետևանքների, ՀՀ տնտեսության համար կապիտալ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության աճի հնարավորությունների բացահայտումը, պարտքի մակարդակի և հարկաբյուջետային կայունության վրա պարտքի պորտֆելի ազդեցության գնահատումը, ՀՀ նոր հարկաբյուջետային կանոնների պահպանման դեպքում պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազման հեռանկարների բացահայտումը: Եզրակացվել է, որ պետական ներդրումների ավելացումը որպես հարկաբյուջետային քաղաքականության ուղղություն, կարող է լինել բավական արդյունավետ՝ հանգեցնելով տնտեսական աճի արագացմանը և մասնավոր ներդրումների աճին, միաժամանակ ռիսկեր չառաջացնելով հարկաբյուջետային կայունության համար: Հետևաբար՝ Հայաստանի տնտեսության ներկա պայմաններում տնտեսական արագ վերականգնում և աճի արագացում ապահովելու համար կառավարությունը պետք է ջանքեր ներդնի կապիտալ ծախսերի իրականացման կարողությունների զարգացումն ապահովելու ուղղությամբ, ինչը թույլ կտա բարձրացնել պետական ներդրումների կշիռը ՀՆԱ-ում: Ավելին, կառավարության նպատակը պետք է լինի առաջիկա տարիներին կապիտալ ծախսերը հասցնել տարեկան ՀՆԱ-ի 4.0%-ին (պատմական միջին մակարդակին), իսկ միջնաժամկետ ժամանակահատվածում պետական կապիտալ ծախսերը պետք է հասնեն նախաճգնաժամային ամենաբարձր մակարդակին՝ ՀՆԱ-ի 6.2%-ին, որը գրանցվել էր 2007 թվականին: Հետազոտության արդյունքներով հրատարակվել է 10 գիտական հոդված: Ծրագիրը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի հարցման կարգով նիստում (արձանագրություն N 17):

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Հավանություն տալ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում»՝ ««Պետական փոխառու միջոցների ներգրավման միջոցով տնտեսական զարգացում ապահովելու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում»** (ծրագրի գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Կ.Հ.Գրիգորյան**) **2021 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությանը և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե** (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն, կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան